

## ՄԻ ԷՋ ՀԱՅ ԲԱՆԱԴԱՅՔԱՐԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆՑ

(Ռ. Դրամբյան - Յ. Թումանյան)

### Դ. Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Արևելահայ մամուլում XX դարասկզբին հայտնվում են մի շարք հրապարակումներ, որոնց քննարկման թեման գրագողությունն էր (բանագողությունը): Եվրոպական, ռուսական մամուլը և քննադատությունը նախորդ տասնամյակներում բազմիցս անդրադարձել էին այս իրողությանը, փորձել էին զատորոշել ստեղծագործ մտքի և ուրիշների կողմից նրա բառացի վերարտադրության, այլ խոսքով՝ սեփականացման սահմանները: Հստակ ձևակերպված օրենքներ չկային, սակայն ձևավորված բարոյահոգեբանական մթնոլորտը որոշակի զգաստության էր մղում գրողին կամ գիտնականին: Մտահոգությունը փոխանցվել էր նաև դարասկզբի հայ մտավորականությանը:

Հայ գրականության մեջ հատկապես քննադատության թիրախ են դառնում այն գրողները, որոնց ստեղծագործություններն անմիջականորեն սնվում էին ժողովրդական բանահյուսությունից: Թվում էր, թե ամեն ինչ պատրաստի վիճակում կա՝ ժողովրդական պատումի թեման, սյուժեն, դարձվածքները, լեզվական հումքը... Քիչ բան է մնում գրողին: Ուստի գրագողության հավանականությունը խիստ մեծ է, - այսպես էին մտածում դարասկզբի մի շարք քննադատներ, և նրանց մեջ մասնավորապես՝ Ռ. Դրամբյանը: Վերջինիս հոդվածը՝ «Գրական մեծությունները» բանագող՝ վերնագրով, որ տպագրվեց «Մշակ»-ում 1909-ին, սկիզբ դրեց ծավալուն մի խոսակցության և իրարամերժ մտքերի բախումի, որոնք շարունակվեցին հայ մամուլում մի քանի տարի: Իր հրապարակման առաջին իսկ տողերից Ռ. Դրամբյանը «ահագանգ» է հնչեցնում հայ գրական կյանքում առկա «շանտաժի», «ավերիչ ժանտախտի», «խնամհիական հաշիվների», «բանագողության» մասին: Այս երևույթի դեմ, որ իր շրջապատյտի մեջ է առել նույնիսկ արդեն «որոշ դիրք ունեցող» գործիչների, ըստ հեղինակի, պետք է կոչվել «ամենախիստ ձևով»: Ու այնուհետև, որպես գրագողության օրինակներ, հիշատակվում են Հ. Թումանյանի «Ծիրեր», Ստ. Լիսիցյանի «Քաջ ճամփորդները» և «Լուսաբեր» դասագրքում զետեղված «մի քանի հոդվածներ» («հոդված» ասելով՝ նկատի ունի գեղարվեստական ստեղծագործությունը - Դ.Պ.), որոնք Թումանյանն ու իր գործընկերները իբր հիմնականում արտագրել են Ս. Հայկունու «աշխատություններից»: Հետաքրքիր է, որ Դրամբյանը «Հայկունու աշխատությունները» է անվանում ժողովրդական բանահյուսությունից նրա կատարած գրառում-մշակումները<sup>1</sup>: Ապա հոդվածը ստանում է հոգեբանական-հուզական երանգավորում: Հեղինակը մի պահ վերհիշում է Հայկունու, ինչպես նաև հայ մի շարք նշանավոր գրողների՝ թշվառության մեջ ապրած կյանքը և հոետորական հարցումով շարունակում. «Ինչո՞ւ չդիմեցին հանգուցյալին կենդանի ժամանակ թույլտվություն ստանալու... Բայց ինչո՞ւ հանձն առնել այդ նեղությունները. չէ՞ որ հմայիչ է ինքնուրույն

<sup>1</sup> Այս իրողությունը հեզանաքով արձանագրել է Հ. Թումանյանն իր պատասխան հոդվածում. «Նրան (Հայկունու - Դ.Պ.) իր արտագրածի համար ասում եք «Ս. Հայկունու աշխատությունը», իսկ ինձ իմ կազմածի ու պատմածի համար՝ բանագող...» («Մշակ», 1909, № 169, 5 օգոստոսի):

հեղինակության կոչումը և ավելի հրապուրիչ՝ ուրիշի աշխատանքով գումարներ դիզելը»<sup>2</sup>։

Մեկ շաբաթ հետո Թումանյանը «Մշակ»-ում տպագրում է պատասխան հոդվածը։ Այդ պատասխանը արտաքին ու խորքային մի շարք նրանգներ ունի։

Նախ՝ խորքային մասին։

Նյութի հանդեպ Դրամբյանի մակերեսային եզրակացությունները Թումանյանը հերքում է՝ «գրողը և ժողովրդական ստեղծագործությունը» փոխառնչության սկզբունքային դրույթներից կարևորագույնը ի ցույց դնելով. «...Լեքիաթները գրական մարդիկ չեն հորինում, այլ առնում են ժողովրդականը ու պատմում։ Եվ շնորհից հենց եղ պատմելու մեջն է, որ իմանան ինչը փոխեն, ինչը դուրս գցեն, ինչը պահեն, ինչ լեզվով, ինչ ռոճով ու ինչպես պատմեն, որ և գեղեցիկ դուրս գա, և ժողովրդականի համն ու հոտը չկորցնի»<sup>3</sup>։

Այնուհետև մատնանշում է իր հեքիաթի («Ծիտը») և Հայկունու մշակումի («Աշըղ Այհլորը») լեզվաոճական տարբերությունները, հանգամանորեն ներկայացնում դրանք՝ միաժամանակ ընդգծելով նյութի հանդեպ իր և Հայկունու գեղագիտական ըմբռնումների տարբերությունը. «Նրա հերոսը իր գտածն է տալի, իմը իր ցավը, նրա հերոսը հարսի տեր է դառնում, իմը մնում է դատարկ։ Եվ նրա վարիանտը ես չեմ էլ հավանում, սխալ եմ համարում»<sup>4</sup>։

Իր պատճառաբանություններն ավելի համոզիչ դարձնելու նպատակով Թումանյանը մեջ է բերում «Ծիտը» հեքիաթի յոթ այլ տարբերակներ, որոնք լույս էին տեսել Հայկունու տպագրածից առաջ հայերեն և ռուսերեն տարբեր ժողովածուներում։ Նույնը՝ «Չախչախ թագավոր» հեքիաթի պարագայում (այս անգամ՝ 13 տարբերակ)։ Նա հստակ բացատրություններ է տալիս նաև «Լուսաբեր» դասագրքում ժողովրդական նյութերի հանդեպ իր և մյուս կազմողների մոտեցման մասին։

Թումանյանն ու իր հակառակորդը հարցին մոտենում էին գեղագիտական տարբեր ըմբռնումներով։ Ժողովրդական նյութի հետ բառերի, դարձվածների ու նախադասությունների ընդհանուր մեծությունը Դրամբյանին իրավունք էր տալիս հայտարարելու, թե գրական մեծությունը բանագող է, իսկ Թումանյանի կարծիքով՝ նույն այդ ժողովրդական նյութը ստեղծագործաբար յուրացնելով՝ գրողը վերադարձնում է այն ավելի զտված ու կատարելագործված, գեղարվեստական յուրջ արժեք ներկայացնող շարադրանքով։

Բանաստեղծի հոդվածը ներքին մեկ այլ դրդապատճառ էլ ուներ, և այս հանգամանքը նա շարունակ շեշտում է իր հետագա պատասխաններում։ Թումանյանի վրդովմունքի և մտահոգության գլխավոր պատճառը ոչ թե կոնկրետ անձն էր՝ Դրամբյանը, այլ ավելի ընդհանուր բնորոշմամբ՝ նրա նմանների հավաքական մտածողությունը, այն է՝ «հայոց դրամբյանիզմը»։ «Ես ճանաչում եմ ձեզ։ Դուք մի որևէ Ռ. Դրամբյան չեք։ Դուք միևն էք։ Դուք շատ եք։ Դուք տիպ եք։ Դուք էն պատիկ, մաղձոտ ու մուջ հոգին եք, էն հավիտենական անկոչ պրոկուրորը, որ ամեն տեղ, ուր կերևա, միայն «դիպվածով» լսած լինելով մի բան, դատում ու դատապարտում է ամեն գործ ու գործիչ, առանց ճանաչելու, առանց ամաչելու»<sup>5</sup>։

Այժմ հոդվածի արտաքին կամ այլ խոսքով՝ մատուցման ձևի մասին։

Բանաստեղծի վրդովմունքը մեծ էր. գրելու ընթացքում նա չի էլ փորձում զսպել իր հուզական բռնկումները։ Եվ եթե հարցը դիտարկենք բանավեճին (բանակոչին)

<sup>2</sup> Ռ. Դրամբյան, «Գրական մեծությունները» բանագող, «Մշակ», Թիֆլիս, 1909, № 162, 28 հուլիսի։

<sup>3</sup> Լ. Թումանյան, Ոչ-գրական ոչնչությունները քննադատ, «Մշակ», 1909, № 169, 5 օգոստոսի։

<sup>4</sup> Նույն տեղում։

<sup>5</sup> Նույն տեղում։

ներկայացվող պահանջների սահմաններում, ապա Թումանյանի պատասխանը քննադատության չի դիմանում. «Ոչ-գրական ոչնչություն», «Մաղձը շարժվում է մարդուկի ներսը...», «էստեղ տվեք ձեր ականջներն ու կանգնեցեք մեր առջև», «անհոգի, տափակ ընթերցող», «ստահակորեն հիստորալով ու բերանների շաղ տալով...», «անհույս կուրություն ու անհատակ տգիտություն», «համբակի թեթևամտություն» և այլն, և այլն: Ողջ հողվածում սկզբից մինչև վերջ սարկազմը բացվում է նորանոր ձևերով, սրա հետ մեկտեղ՝ որոշակի ուղիղ պարբերականությամբ խոսքը «համեմվում» է Դրամբյանին ուղղված երգիծական պիտակներով՝ «ո՛վ լուրջ քննադատ Դրամբյան», «ո՛վ հայոց գրականության խուզարկու Դրամբյան», «ո՛վ դուք մեռելների սիրահար ու կենդանիների թշնամի Դրամբյան, ո՛վ ամեն շնորհքի հավիտենական ռեսերիմ Դրամբյան...» և այլն:

Իհարկե, Թումանյանի հակառակորդի հողվածը ևս աչքի չէր ընկնում պատշաճությամբ: Գրական կյանքում իբր թե տիրող «շանտաժի», «ավերիչ ժանտախտի» առկայությունը նրան մղել էր գրական մեծություններից, մասնավորապես այդ տարիներին արդեն ժողովրդի կողմից սիրված ու ճանաչված գրողին «բանագող» անվանելու: Հասկանալի է Թումանյանի վրդովմունքը: Ու թերևս այնքան էլ հեշտ չէր նման վիրավորանքի դեպքում, որպես հիմնական ընդդիմադիր կողմ, հավասարակշռված պատասխանով հանդես գալը: Սակայն նախ՝ բանավեճը (բանակոխվը) իր որոշակի պահանջներն ունի, և ապա՝ ընթերցողների մի խավ նման հրապարակումների դեպքում երբեմն ավելի մեծ ուշադրություն է դարձնում ասելիքի արտաքին կողմին՝ երկրորդ պլան մղելով խորքայինը: Թերևս այդ խավի արտահայտիչն էր բանակոխի երրորդ մասնակիցը՝ Մուշեղ Բագրատունին, որի հողվածի վերնագիրն արդեն իսկ հուշում է հեղինակի ասելիքի բուն էությունը՝ «Գրական էտիկան գրական մեծությունների ձեռքում»:

Բագրատունին մի կողմից քննադատում է Դրամբյանին՝ վերջինիս գրածը համարելով «երեխայական մի հանդգնություն», մյուս կողմից ավելի հանգամանորեն կանգ է առնում Թումանյանի պատասխանի վրա: Նա մտահոգված է հատկապես նման բանակոխվածներում ի հայտ եկող գրական էթիկայի խնդրով: Այս մակարդակում դատողություններն ընդունելի են, տրամաբանական առումով՝ անխոցելի. «Եթե մի «գրական փոքրություն» գրական էտիկայի մեջ անսանձ է, անկորրեկտ և անբարեխիղճ, ապա ի՞նչ իրավամբ մի գրական «մեծություն» կատարում է նույնը ավելի ուժգին չափով... Ասացեք, եթե մեծն էլ, փոքրն էլ սրբապղծում են գրական էտիկան, ապա ո՞վ պետք է օրինակ դառնա հետագաներին»<sup>6</sup>:

Զննարկման բուն նյութ դարձնելով գրական մեծությունների «տեսակերամենտի», իսկ ավելի լայն առումով՝ գրական էթիկայի խնդիրը՝ Բագրատունին սուսկ հպանցիկ անդրադարձ է կատարում գլխավոր հարցադրմանը՝ բանագողություն<sup>6</sup> էր արդյոք Թումանյանի կատարածը, թե՞ ոչ: Եվ, կրկնում ենք, նրա նման ընթերցողների կողմից, որոնց թիվը քիչ չէր, խորքային առումով բանաստեղծի վարած սկզբունքային վեճը անուշադրության էր մատնվել:

Այդպիսի «անուշադիր» ընթերցողներից էր նաև Հ. Մ. Պոտուրյանը, որը «Բագրատունի» 10-րդ համարում<sup>7</sup> թեթևակիորեն անդրադառնում է հիշյալ բանակոխին:

<sup>6</sup> Մ. Բագրատունի, Գրական էտիկան գրական մեծությունների ձեռքում, «Մշակ», 1909, № 179, 16 օգոստոսի:

<sup>7</sup> Հ. Թումանյանի Երկերի լիակատար ժողովածուի (կրճատ ԵԼԺ) 6-րդ հատորում «Հայր Պոտուրյանին» հողվածի ծանոթագրության մեջ, նշված է, թե բանաստեղծն իր պատասխանում «ակնարկում է Մ. Պոտուրյանի «Հայ մամուլը տասնհինգ տարվա մեջ» (պետք է լինի՝ «Հայ մամուլը տասնհինգ տարվա մեջ» - Դ.Պ.) ընդարձակ հողվածի առաջին մասը (տե՛ս «Բագրատունի», 1909, № 9), որտեղ հողվածագիրը միջամտում է Թումանյանի և Դրամբյանի վեճին, Թումանյանին կշտամբում «կոպիտ» արտահայտություններ թույլ տալու համար, անվանում «հանդուգն» (Հովհաննես Թումանյան, ԵԼԺ, Եր., 1994, հտ. 6, էջ 638): Մենք ուշադիր ընթերցեցինք № 9-ում Պոտուրյանի զետեղած վերոհիշյալ հողվածի

Մխիթարյան գործչին ըստ երևույթին համոզիչ են թվացել Ռ. Դրամբյանի բերած փաստարկները՝ Ս. Հայկունու և Հ. Թումանյանի հեքիաթների բառացի համեմատությունները: Նա իր փոքրիկ ակնարկով ասես հաստատում է Դրամբյանի մեղադրանքը. «Ոմն Ռուբեն Դրամբյան «Իմ վերջին խոսքը Հովհ. Թումանյանին» խորագրով կհամարձակի ծանոթ և հայտնի հեղինակ կամ բանաստեղծ Հովհ. Թումանյանի գրական բանագողությունները երևան հանել: Թումանյանը իր պաշտողները ունի՝ որոնք կրնան զինքը պաշտպանել իրենց սովորական ըրած արհամարհական ռճով, բայց Դրամբյանը համեմայն դեպս եթե չկարենա այլ պատասխանել միշտ պիտի ցուցնե մեզ այն պարտեզը՝ ուսկից պտուղներ առած է Թումանյան. այդ պարտեզը Ս. Հայկունիի «Ժողովրդական առակներ»-ն են (Հմտ. Մշակ 187, 189 ևն ուր բառ առ բառ բանագողությունը դեմ առ դեմ կդնե քննադատը)»<sup>9</sup>:

Ընդամենը այսքանը: Մեջբերումն ինքնին պարզ է դարձնում, թե ինչպես կարող է արտաքննապես «համոզիչ» փաստարկների շարանը ապակողմնորոշել նույնիսկ գրականությանը մոտ կանգնած ընթերցողին:

«Մշակ»-ում կարճ պատասխանով հանդես է գալիս նաև Ստ. Լիսիցյանը<sup>9</sup>: Նա խոսում է միայն իր դեմ բերված փաստերի մասին, համեմատում է իր և Հայկունու հեքիաթները, փորձում վերստին հաստատել «Քաջ ճամփորդները» հեքիաթի ինքնուրույն կողմերը: Եվ սրանով էլ իր գործը ավարտած է համարում: Մեր առջև են բանագողության մեջ մեղադրվող երկու համախոհ գործընկերների (Թումանյան, Լիսիցյան) պատասխանները. մեկինը՝ խորապես վիրավորված ու գայլալից, մյուսինը՝ կարճ ու ամփոփ, մեկինը միտված է դեպի երևույթների խորքային բացահայտումները, մյուսինը ինքնարդարացման փորձ է, մեկը ցանկություն իսկ չունի մնալու բանավեճին (բանակովին) պարտադրվող պատշաճության սահմաններում, մյուսը որևէ վիրավորանք չի հնչեցնում հակառակորդի հասցեին: Եվ այնուհետև, որպես քննադատության ու մեղադրանքի զլխավոր թիրախ, մնում է նրանցից առաջինի՝ Հ. Թումանյանի ստեղծագործությունը:

Բազրատումու ելույթից կարճ ժամանակ անց «Մշակ»-ում կրկին հանդես է գալիս Ռ. Դրամբյանը՝ «Իմ վերջին խոսքը Հովհ. Թումանյանին» հոդվածով: Այս անգամ նա բավականին զուսպ է, աշխատում է միայն վերահաստատել ժողովրդական բանահյուսությունից օգտվելու սեփական սկզբունքային մոտեցումները, ապա ավելի հանգամանորեն ընթերցողին է ներկայացնում Հայկունու և Թումանյանի մի քանի գործերի համեմատական պատկերը՝ եզրակացնելով. «Հո տեսնո՞ւմ եք, որ վերցված է բառ առ բառ, կետ առ կետ: Եթե կուզեք՝ կետադրությունն էլ է վերցված»<sup>10</sup>: Նրա այս հոդվածը կրկին հաստատում է, որ Դրամբյանը և իր

---

առաջին մասը, բայց ոչ մի ակնարկ Թումանյանի և Դրամբյանի բանակովին չգտանք: Այստեղ նույնիսկ «Մշակի» մասին որևէ խոսք չկա: «Մշակին» Հ. Մ. Պոտուրյանն անդրադառնում է իր հոդվածի՝ «Բազմավեպի» № 11-ում տպագրված հատվածում՝ «Ռուսահայ մամուլը՝ խորագրի ներքո, բայց այնտեղ էլ որևէ հիշատակություն Թումանյան-Դրամբյան բանակովի մասին չկա: Վերջինիս Հ. Մ. Պոտուրյանն անդրադառնում է, որքանով մեզ հաջողվեց պարզել, ամսագրի 10-րդ համարում՝ իր «Ռուսահայ գրականությունը» հոդվածի «Բ. Թերթեր» ենթավերնագրի ներքո: Ըստ երևույթին ծանոթագրողներին թյուրիմացության մեջ է զգել ինքը՝ Թումանյանը, որն իր հոդվածում հստակ նշում է «Բազմավեպի» թիվը՝ 9-րդ համարը: Բայց թե նրանք որտեղից են վերցրել իբր թե Հ. Մ. Պոտուրյանի կողմից Թումանյանի հասցեին ուղղված «կշտամբանքները» կամ «համդուզն» արտահայտությունը, մեզ հայտնի չէ:

<sup>9</sup> Հ. Մ. Պոտուրյան, Ռուսահայ գրականությունը, «Բազմավեպ», Վենետիկ, 1909, № 10, էջ 478-479:

<sup>9</sup> Տես Ստ. Լիսիցյան, Նամակ խմբագրության, Ռ. Դրամբյանին, «Մշակ» 1909, № 198, 10 սեպտեմբերի:

<sup>10</sup> Ռ. Դրամբյան, Իմ վերջին խոսքը Հովհ. Թումանյանին, «Մշակ», 1909, № 189, 29 օգոստոսի:

համախոհները, արտաքին մակարդակում նկատելով ժողովրդական նյութից բա-  
ների, նախադասությունների, նույնիսկ հատվածների համարյա թե բառացի վե-  
րարտադրություններ, չէին ըմբռնում, այն ոգին և արարչական շունչը, որ հաղոր-  
դում են մեծ բանաստեղծները՝ նման գործերը «սեփականացնելով»։ Ուստի զար-  
մանալի չպիտի թվա Դրամբյանի «տրամաբանական» եզրահանգումը. «Բա՞րձր է  
ձեր աշխատությունը Հայկունու կատարածներից, - հողվածի վերջում դիմում է նա  
Թումանյանին,- այդ դեռ հարց է: Եվ ավելի շուտ Հայկունունը՝ մնայուն, հավիտ-  
յան ապրող և գիտության համար բազմաթիվ ուսումնասիրությունների ու անթիվ  
գիտական հարցերի պարզաբանության միակ աղբյուր:

Այսպես գնահատելով՝ դուք չպիտի մոտենայիք Հայկունու աշխատան-  
քին...»<sup>11</sup>:

Թումանյանը թեև գրում է պատասխան հողվածներ Մ. Բագրատունու և Ռ.  
Դրամբյանի դեմ, սակայն մամուլում հրապարակայնորեն հանդես չի գալիս<sup>12</sup>:  
Զգրել չէր կարող, քանի որ խնդիրը դիտարկում էր անձնական վիրավորանքից  
դուրս: Մասնավորապես Բագրատունուն ուղղված պատասխանում նա գրում է,  
թե իր զայրույթի պատճառը Դրամբյանի «փոքրությունն ու տգիտությունը» չէ, այլ  
«նրա հոգին, նրա հոգու թույնը, վատությունը, չարությունը»<sup>13</sup>: Թումանյանի կար-  
ծիքով՝ այդ «թույնով» է վարակված նաև հայ գրական միջավայրը, որի մթնոլոր-  
տը խեղդում է տաղանդավոր գրողներին: Այսպես շարունակվելու դեպքում գրա-  
կան կյանքը կարող է դատապարտվել ամլության: Ուստի հակադրվելու միակ ձևը  
արդար զայրույթն է, որը ժամանակ առ ժամանակ պետք է հնչի գրականության  
կենսական շահերով ապրողների շուրթերից: Չարության մեկ այլ, այն էլ կեղծ  
դրսևորում համարելով Բագրատունու «էթիկական» կշտամբանքները՝ բանաս-  
տեղծը հիշեցնում է, որ հանուն արդարության նույնիսկ «բարի ու հեզ աստվածա-  
մարդը» կարող է բռնկվել. «Չայրացած Հիսուսը Երուսաղեմի տաճարից դուրս  
տարավ աղավնավաճառներին: - Իմ հոր տաճարն, - ասավ, - ավազակների այր  
եք դարձրել: Մի՞թե կարծում եք նրանց աղավնուց ավելի լավ ապրանք են ձեր  
բթամտությունն ու կեղծավորությունը, որ գրականության մեջ վաճառում եք ժո-  
ղովրդին, փոխարենը անուն ու դիրք ստանալու համար»<sup>14</sup>: Թումանյանի վիրավո-  
րանքը «Չայրույթի պատճառը» հողվածում խորն է, հարցադրումները՝ սուր և եր-  
բեմն ծայրահեղությունների հասնող: Իր ստեղծագործության ոգին չհասկացող  
քննադատի, մեկ այլ դեպքում՝ բարոյախոսի և ընդհանրապես չարամիտ ընթեր-  
ցողի հավաքական կերպարը ի մի բերելով՝ նա հողվածի մի շարք էջերում դառը  
խոսքեր է ուղղում նաև հարազատ ժողովրդի հասցեին՝ մասնավորապես համե-  
մատելով նրան շարունակ ուղքի տակ տրորվող վարունգի թփի հետ, որի պտուղը  
դառնանում է. «Մենք էլ ուտի տակ ընկած, դարերով տրորված ժողովուրդ ենք,  
դրա համար էլ շատ թույն, դառնություն, չարություն կա ամբարված մեր հոգում»<sup>15</sup>:

Հողվածում առկա խոր հիասթափությունն ու բողոքը թերևս կարևոր դեր են  
խաղացել, որ գրողն այն «Մշակի» խմբագրությունն չուղարկի, քանի որ այս անգամ  
էլ խիստ մեծ էր չհասկացվելու հավանականությունը:

<sup>11</sup> Նույն տեղում, № 193, 3 սեպտեմբերի:

<sup>12</sup> Այդ հողվածներից մեկը՝ «Չայրույթի պատճառը» վերնագրով, բանաստեղծը գրել է Մ. Բագ-  
րատունու հրապարակման կապակցությամբ. առաջին անգամ տպագրվել է «Սովետական գրակա-  
նություն» ամսագրում, 1959-ին (№ 2): Մյուսը՝ «Չարության և կեղծավորության դեմ», պատասխան է  
Դրամբյանի երկրորդ հողվածին. առաջին անգամ լույս է տեսել «Թումանյան, Ուսումնասիրություն-  
ներ և հրապարակումներ, 2» ժողովածուում, էջ 325-336 (տե՛ս Հովհաննես Թումանյան, ԵԼԺ, հտ. 6,  
«Մանրագրություններ» բաժինը, էջ 637):

<sup>13</sup> Հովհաննես Թումանյան, Չայրույթի պատճառը, ԵԼԺ, հ. 6, էջ 434:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 437:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 434-435:

Դրամբյանի երկրորդ հրապարակման առիթով գրված պատասխանում («Չարության և կեղծավորության դեմ»), որ նույնպես չի տպագրվել, Թումանյանն իրեն բնորոշ հեզմանքով շարունակում է հերքել հակառակորդի նոր փաստարկներն ու առարկությունները: Մասնավորապես ուշադրության է արժանի նրա կողմից օգտագործված «դրամբյանական հնարքը»։ Կիսաերգիծական տոնով, իր «կրիտիկոսի» անանողությամբ ու մեթոդով, Հայկունու և այլ աղբյուրների տարբերակները կողք կողքի դնելով՝ նա էլ իր հերթին «բանագող» է դուրս բերում... Հայկունուն՝ մեկ անգամ ևս ի ցույց դնելով նրա «պաշտպանի» փաստարկների սնանկությունը:

Բագրատունու և Դրամբյանի հողվածների դեմ մամուլով հանդես չգալը կանխեց նոր կրքերի բորբոքումը: Թվում էր, թե բանակոխվեց ավարտված է, սակայն չորս տարի հետո, այս անգամ «Հովիտ» շաբաթաթերթում հանդես է գալիս մեկ այլ քննադատ՝ Ս. Հ.-ն (Միմեոն Համայանը): Վերջինս, իր հողվածում համեմատելով հայ բանաստեղծի ստեղծագործության և ռուսական հեքիաթի մի շարք հատվածներ, փորձում է ապացուցել, որ «Գառնիկ ախպերը» «ոչ այլ ինչ է, բայց թե տեղ-տեղ ազատ փոխադրություն և ուրիշ տեղ էլ ստրկական թարգմանություն՝ ռուսական ժողովրդական մի հեքիաթից, որ կրում է «Сестрица Аленушка и братец Иванушка» վերտառությունը»<sup>16</sup>: Հեղինակն այնքան ոգևորված է իր «գլուտով», որ հողվածն ավարտում է բարոյական դասեր տվողի հեռտորական հարցումով. «Մի՞թե Հովի. Թումանյանի համար այնքան գրավիչ է եղել գրական թալանի զգվելի՜... ու կեղտոտ ուղին...»<sup>17</sup>:

Հրապարակմանն անմիջապես արձագանքում է «Մշակը»՝ անվերապահորեն հավատալով Ս. Հ.-ին և ապա նաև եզրակացնելով, թե «բանագողությունը ընդհանուր երևույթ է դարձել մեր գրողների մեջ»<sup>18</sup> (ընդգծումը մերն է - Դ. Պ.): Հաջորդ օրն իսկ այս մտքի դեմ Ծիրվանգաղեի բողոքի առիթով<sup>19</sup> «Մշակը» փորձում է արդարանալ՝ դարձյալ անուղղակիորեն մեղադրելով Թումանյանին բանագողության մեջ:

Նոր քննադատություններից<sup>20</sup> բանաստեղծը պատասխանում է «Հայոց դրամբյանիզմն ու ես» հողվածով<sup>21</sup> («Հորիզոն», 1913, հունիսի 12, 13, 21, №№ 128, 129, 135): Թումանյանի դիրքորոշումը և սկզբունքային մոտեցումները չէին փոխվել. «Էն ժողովրդական հում նյութերի համար է, որ բանահավաքները գրում են՝ որտեղ են լսել, երբ են լսել, ով է պատմողը, քանի տարեկան է և այլն, և այլն, որովհետև էն արձանագրություն է, պրոտոկոլ է և պարտավոր են նույնիսկ նրա սխալներն էլ էնպես գրի առնելու, ինչպես որ կան: Իսկ մշակածի, գրական լեզվով պատմած, փոփոխածի, զանազան վարիանտներից կազմածի, չափական ձևի

<sup>16</sup> Ս. Հ., Հովի. Թումանյանի «Գառնիկ ախպերը», «Հովիտ», 1913, № 16, 28 ապրիլի:

<sup>17</sup> Նույն տեղում:

<sup>18</sup> «Մշակ», 1913, № 93, 2 մայիսի, «Մամուլ» խորագրի ներքո:

<sup>19</sup> Ա. Ծիրվանգաղե, Նամակ խմբագրության, «Մշակ», 1913, № 94, 3 մայիսի:

<sup>20</sup> Բացի վերոնշյալից՝ Թումանյանի դեմ հունիսին ևս մի հողված է տպագրում Ս. Հ.-ն՝ «Հայտնի բանաստեղծ կամ անհայտ բանագող» վերնագրով («Հովիտ», 1913, № 22, 9 հունիսի), որը պատասխան էր բանաստեղծի «Հովիտի» Ս. Հ.-ի քննադատական առիթով՝ հողվածին («Հորիզոն», 1913, № 95, 3 մայիսի): Մայիս 28-ին (№ 115) «Հորիզոնի» «Նամակներ խմբագրության» խորագրի ներքո տպագրվում է Դրամբյանի «Պատասխան Թումանյանին» նամակը: Իր «Հայոց դրամբյանիզմն ու ես» հողվածում Թումանյանը Դրամբյանի այս պատասխանը սխալմամբ թվագրում է «Հորիզոնի» № 45-ը: Նրա Երկերի լիակատար ժողովածուի «Ծանոթագրություններ» բաժնում գրված է. ««Հորիզոնի» 1913 թ. № 45-ում այս մասին որևէ նյութ չենք գտել» (էջ 599): Ծանոթագրողներն ըստ երևույթին չեն թերթել «Հորիզոնի» մյուս համարները: Իրականում Դրամբյանի նամակը գետնեղված է թերթի № 115-ում:

<sup>21</sup> Ի դեպ, որոշ հատվածներ և մտքեր Թումանյանը վերաշարադրել է դեռևս 1909-ին Դրամբյանի դեմ գրած և չտպագրված «Չարության և կեղծավորության դեմ» հողվածից:

վերածածի վրա չպետք է էլ գրվի, նա արդեն ժողովրդականը չի, թեև բնագիրը ժողովրդիցն է առած»<sup>22</sup>:

Հոդվածի վերջում Թումանյանն արդարացնում է իր անհաշտ կեցվածքն ու չափավորության սահմաններում չտեղավորվող երգիծական մերկացումները, քանի որ Դրամբյանի ու Ա.Հ.-ի մեղադրանքները դիտում է իբրև «գարշելի երևույթ», որը պետք է մի օր վերջ ունենա. «Իսկ եթե նրան վերջ չի լինիլ, վերջ չի լինիլ և գրական մարդու ցասումին ու հարվածներին: Օտտ հին ու սուրբ կոիվ է սա»<sup>23</sup>:

Ի հարկե, հանգիստ չի նստում նաև Դրամբյանը, որը «Մշակի» 175, 176-րդ համարներում (10, 11 օգոստոսի, 1913 թ.) տպագրում է արդեն չորրորդ հոդվածը՝ «Հովհ. Թումանյան և ժողովրդական նյութերը» վերնագրով: Այս անգամ նա փորձում է տեսական հիմնավորումներով հաստատել բանաստեղծի գրագողությունը: Հերթական անգամ չգնահատելով Թումանյանի անհատականության դերը ժողովրդական նյութի մշակման գործում՝ նա եզրակացնում է, թե քանի որ բանաստեղծը «տվել է երկը իր ամբողջական կառուցվածքով, տիպերով, բնութագրերով և իդեալով այնպես, ինչպես տվել է ժողովուրդը, ուրեմն նա գողացել է ժողովրդից (ընդգծումը հեղինակինն է - Դ.Պ.), ուրեմն երկը նրանը չի, այլ ժողովրդինն է»<sup>24</sup>:

Բանակովի այս փուլում, ի պաշտպանություն Թումանյանի, հանդես է գալիս երիտասարդ քննադատ Յուլյա Խանգադյանը: Նրա հոդվածում ուշադրություն է գրավում երկու կարևոր հանգամանք: Առաջին դեպքում նա գտնում էր, որ ցանկացած գրական հեղինակության (այդ թվում նաև՝ Թումանյանի) ստեղծագործությունները հարկ եղած դեպքում կարող են քննադատության արժանանալ, բայց բանագողության մեջ մեղադրելուց առաջ պետք է նախ՝ «հրապարակի վրա դնել կասկածը» և սպասել պատասխանին:

Ավելի ուշագրավ է երկրորդ դիտարկումը: Խանգադյանը խորապես ըմբռնում է Թումանյանի ստեղծագործական ժառանգության գեղագիտական բարձր արժեքը: «Քննադատի կարծիքով՝ «ժողովրդական մոտիվներով» գրված գործերում Թումանյանը «ներ ամենախնքնատիպ, ամենախնքնուրույն բանաստեղծն է», իսկ ընդհանրապես նա «հայ ժողովրդի հոգևոր կարողության ամենահզոր արտահայտություններից մեկն է: Հուսարեկման դառը թուպեին, երբ հոռետեսության ալիքը լցնում է հոգիդ, և ակնկալությունները հայ ժողովրդի նկատմամբ խամրում, թուլանում են, - Թումանյանի կատարյալ տողերով վանում են հուսահատությունը և նրա բանաստեղծության զովարար աղբյուրից նոր հավատ, նոր ներշնչում ստանում: Դեռ կենսունակ է այն ազգը, որ այսօր Թումանյան ունի»<sup>25</sup>:

Բանաստեղծի և նրա ընդդիմադիրների բանակովում, այսպիսով, ի հայտ եկան մի շարք կարևոր միտումներ:

XX դարասկզբին արևելահայ գրական գործընթացների հորձանուտում երբեմն տարերայնորեն միախառնվում էին ստեղծագործ միտքն ու վերջինիս կրկնօրինակումները: Երևույթը, որ բնորոշվում էր իբրև գրագողություն, վերագրվում էր հատկապես այն գրողներին, ովքեր հաճախ էին օգտվում ժողովրդական բանահյուսությունից: Սակայն քննադատության թիրսխը ոչ միշտ էր ճիշտ ընտրվում. խոսքը մասնավորապես Հ. Թումանյանի ստեղծագործության մասին է:

<sup>22</sup> Հ. Թումանյան, Հայոց դրամբյանիզմն ու ես, «Հորիզոն», 1913, 21 հունիսի, № 135:

<sup>23</sup> Նույն տեղում:

<sup>24</sup> Դ. Դրամբյան, Հովհ. Թումանյան և ժողովրդական նյութերը, «Մշակ», 1913, № 175, 10 օգոստոսի:

<sup>25</sup> Նույն տեղում:

Քննադատները (Ռ. Դրամբյան, Ս. Հ.)՝ գրագողություն համարելով բանաստեղծի՝ ժողովրդական նյութերից երբեմն նաև բառացի կատարած ընդօրինակումները, դրանք ներկայացնում էին Թումանյանի տվյալ ստեղծագործության գեղարվեստական կառուցից, նրա համատեքստից դուրս: Նման մոտեցումն ընթերցողների շրջանում գրագողության պատրանք էր ստեղծում՝ անտեսելով գլխավորը՝ գրողի անհատականությունը: Միտումնավոր էր արդյոք Թումանյանին ուղղված մեղադրանքը, թե՞ սկզբունքային դիրքորոշման արդյունք՝ դժվար էր ասել, բայց մի բան փաստ է. թե՛ 1909 և թե՛ 1913 թթ. տպագրած հոդվածներում Ռ. Դրամբյանը չնահանջեց իր դիրքերից: Ավելին, 1913-ին նա փորձում էր արդեն տեսական հիմնավորումներով հաստատել, որ Թումանյանը «գողացել է ժողովրդից»:

Բանակովի ընթացքում (ավելի կոնկրետ՝ երկրորդ փուլում) ընդգծվեց նաև բանաստեղծի ստեղծագործությունն անվերապահ ընդունողների մոտեցումը, որոնց խոսափողը Ց. Խանգադյանն էր՝ Թումանյանի գեղարվեստական աշխարհը խորությամբ ընկալող երիտասարդ քննադատը:

Մյուս կարևոր իրողությունը մասնակիցների ելույթներում բազմիցս շոշափված գրական էթիկայի խնդիրն էր: Ցավոք, խոսքի պատշաճության սահմաններում չմնացին թե՛ Ռ. Դրամբյանն ու Ս. Հ.-ն և թե՛ առավել ևս Հ. Թումանյանը, թեև վերջինս իր հոդվածներում շարունակ փորձում էր արդարացում գտնել Դրամբյանի հասցեին արված զայրալից արտահայտություններին:

Նման պայմաններում գրական մթնոլորտը շիկանում է փոխադարձ թշմամանքով ու անհանդուրժողությամբ, որը սուբյեկտիվություն է հաղորդում բանակովի մասնակիցների դիրքորոշումներին և ինչ-որ առումով նեղացնում գեղարվեստական մտածողության սահմանները:

Անհնար է չնկատել մամուլի օրգանների՝ որոշ դեպքերում սուբյեկտիվ վերաբերմունքը գրողի արժանապատվությունը շոշափող խնդիրին: Երբեմն չխորանալով տարածայնությունների բուն էության մեջ՝ նրանք կա՛մ խմբագրական խոսքով, կա՛մ էլ իրենց հեղինակների բերանով հաստատում էին Թումանյանին ուղղված բանագողության մեղադրանքը, որով և որոշակիորեն ներազդում հասարակական կարծիքի վրա:

Դրամբյան-Թումանյան բանակոխվել դարասկզբի արևելահայ գրական կյանքի դրսևորումներից մեկն էր: Այն ի հայտ է բերում մի կարևոր միտում ևս: Հայ գրողը և քննադատը որոնումների մեջ էին: Գեղարվեստական մտածողությունը փորձում էր համահունչ ընթացալ ժամանակի հասարակական-քաղաքական գործընթացներին: Գրական ճանաչված ուղղությունների կողքին հայտնվում էին նորերը: Զգալիորեն մեծացել էր հետաքրքրությունը հայ ժողովրդական բանահյուսության նկատմամբ: Այս ասպարեզում չէին բացառվում նաև ժողովրդական նյութերի անտաղանդ կրկնօրինակումները: Գրական գործընթացների զարգացման տրամաբանությունը միանշանակ ընկալումներ չունեք: Ուստի նույնիսկ որոշակի համբավի տեր գրողը և մեծատաղանդ անհատականությունը, որպիսին, ասենք, Հ. Թումանյանն էր, կարող էր և սխալ ընկալվել քննադատների ու ընթերցողների մի խավի կողմից:

Ինչևէ, ժամանակն ապացուցեց, որ Թումանյանին բանագողության մեջ մեղադրողների մոտեցումները մակերեսային էին: Ժողովրդական նյութի նրա մշակումները շարունակում են իրենց մնալուն ընթացքը: Իսկ բանակոխվել անմահացրեց... Դրամբյանին, որի անունը հայ գրականության պատմության մեջ մտավ որպես գեղարվեստական խոսքի խորքային արժեքները չընկալողների հավաքական մտածողության խորհրդանիշ:



**Д. В. ПЕТРОСЯН - Из истории литературной борьбы (Р. Драмбян - О Туманян).** - В статье представлена одна из дискуссий, широко развернувшихся на страницах армянской прессы в начале XX века. Р. Драмбян и его сторонники утверждали, что туманяновские литературные обработки фольклорного материала есть не что иное, как плагиат, совершенно игнорируя при этом привносимую в авторский текст индивидуальность писателя. В этом споре и О. Туманян, и его оппоненты выходили порой за рамки профессиональной этики. Своим субъективным подходом дезориентировали читателя также некоторые органы печати.

Будучи одним из заметных явлений литературной жизни Восточной Армении начала XX века, дискуссия между Туманяном и Драмбяном свидетельствовала о том, что единого восприятия логики и путей литературного развития на тот момент еще не было. Время доказало правомерность и верность позиции О. Туманяна, ибо созданные им на фольклорной основе произведения продемонстрировали свою долговечность и притягательность.